ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 256- Ա

25 հոկտեմբերի 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՇԵՔՍՊԻՐ ՀՈՒՆԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՒՄ ԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան վերահասցեագրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովակ համայնքի բնակիչ Շեքսպիր Հունանի Հակոբյանի ՀՀ վարչապետին հասցեագրված 2018 թվականի հոկտեմբերի 18-ի N 150-56728 և ՀՀ պետական վերահսկողության ծառայության պետին հասցեագրված 2018 թվականի հոկտեմբերի 22-ի N Ե/265-18, դիմումները

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովակ համայնքի բնակիչ Շեքսպիր Հունանի Հակոբյանի դիմումներում բերված փաստերն ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Ղազարյան Նորիկ	- մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ, նախագահ
Օհանյան Հրանդիկ	- մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալ
Բուդումյան Խաչատուր	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
Զարոյան Արամ	- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի մասնագետ
Սահակյան Դավիթ	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրության արդյունքներն եռօրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին և Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողության ծառայության պետին:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք. Գավառ